ՀՀ ներքին գործերի նախարարության
ֆինանսաբյուջետային վարչության պետի
պարականությունները կատարող
Աշոտ Բաբայանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ներքին գործերի նախարարության ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ Հասմիկ Հրաչիկի Օհանյանի կողմից 12.01.2026 թվականից մինչև 12.07.2026 թվականը կատարած աշխատանքների վերաբերյալ

1. Ամփոփել եմ ՀՈԳՎ Սյունիքի բաժինների կողմից ներկայացրած բյուջետային ֆինանսավորման հայտ-պահանջագրերը և ներկայացրել ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչություն:

2. Գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային համակարգ եմ մուտքագրել ՀՈԳՎ Սյունիքի բաժինների 2026թ 1-ին եռամսյակի և 1-ին կիսամյակի բյուջետային ծախսերի և սոցիալական փաթեթի գծով կատարվող վճարումների համար նախատեսված չափաքանակները և ժամանակացույցերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման:

3. Կատարել եմ ՀՈԳՎ Սյունիքի բաժինների հաշվապահների կողմից ներկայացրած աշխատավարձերի, գործուղումների, բնակարանների վարձակալության դիմաց վճարվող դրամական փոխհատուցումների, սոցիալական փաթեթի գծով կատարված հաշվարկների ամփոփումը և հայտ պահանջագրերով բացված ֆինանսավորումների հիման վրա գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային համակարգի միջոցով կատարել համապատասխան վճարումները:

4. Համապատասխան փաստաթղթերի ստացման հիման վրա կատարել եմ ատեստավորումների արդյունքներով հաշվարկվող հավելավճարների և պարգևատրումների վճարումները:

5. Կազմել եմ կուտակիչ տեղեկագրեր ՀՈԳՎ Սյունիքի բաժինների հաշվապահների կողմից ներկայացրած հաշվարկների համար, տարանջատել մեկ հաշվից կատարված դրամարկղային ծախսերը՝ ըստ առանձին բաժինների հաշվառումը վարելու համար:

6. Ընդունել և ամփոփել եմ ՀՈԳՎ Սյունիքի բաժինների կողմից ներկայացրած հաշվետվությունները՝ աշխատավարձի, դրան հավասարեցված վճարումների և գնում չհանդիսացող այլ ծախսերի վերաբերյալ՝ 2025 թվականի դեկտեմբեր և 2026 թվականի հունվարից հուլիս ամիսների համար և ներկայացրել ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչություն:

7. Ամփոփել եմ ՀՈԳՎ Սյունիքի բաժինների կողմից ներկայացրած 2025 թվականի տարեկան հաշվապահական հաշվեկշիռը կից հաշվետվություններով և ներկայացրել ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչություն:

8. Կազմել եմ ՀՈԳՎ Սյունիքի բաժինների 2026թվականի 1-ին եռամսյակի և 1-ին կիսամյակի ամփոփ հաշվեկշիռը կից հաշվետվություններով և ներկայացրել ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչություն:

9. Կատարել եմ ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության կողմից ստացված հանձնարարականների պահանջները, հետևել ցուցումներին, շրջաբերականններին պարզաբանումներին, նորմատիվ իրավական ակտերի փոփոխություններին:

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ Հասմիկ Օհանյան

«14» հուլիս 2026 թիվ

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ ________:

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության
պետի պարտականությունները կատարող Աշոտ Բաբայան

«30» հուլիս 2026 թիվ